

Յուրի Ս. Ավետիսյան
Բանասիր. գիտ. դոկտոր

ՁԵՎԱԲԱՆՈՒԹՅԱՆ ՀԱՐՑԵՐ

(գրոն որպես թվական, *մերոնք* և *ձերոնք* բառերը որպես դերանուն)*

Բանալի բառեր – գրո, թվական, քանակ, խոսքիմասային հատկանիշներ, բազմիմաստություն, **մերոնք** և **ձերոնք**, գոյական դերանուն, անեզական, հավաքական իմաստ, փոխանուն, ստացական, **g** հոլովում:

Հայոց լեզվի տեսությունը տվել է ժամանակակից հայերենի քերականության շատ վիճելի հարցերի պատասխանները: Իհարկե, շատերի վերաբերյալ էլ տակավին կան տարակարծություններ, որոնք ժամանակի ընթացքում կանցնեն քննարկումների ճանապարհ, կտրվեն պատասխաններ, կծնվեն նոր տարակարծություններ, և այսպես շարունակ:

Սա լեզվի տեսության զարգացման բնականոն ճանապարհն է: Եվ լեզվի բոլոր մակարդակներում էլ կան հարցեր, որոնք առանձնապես ուշադրության չեն արժանացել կամ քննարկվել են ոչ բավարար չափով. միգուցե նաև այն պատճառով, որ համակարգային նշանակություն չեն ունեցել, կամ պարզապես դրանք հատուկ քննարկման առարկա դարձնելու առիթները չեն ներկայացել: Ձևաբանական մակարդակում մենք առանձնացրել ենք դրանցից մի քանիսը՝ **գրոն որպես թվական**, **մերոնք** և **ձերոնք** բառերի խոսքիմասային պարկանելությունը:

Ջրոն թվական է: Մաթեմատիկայում ամբողջ թիվ է և թվանշան, ինչպես 1-ը, 10-ը, 12-ը, 100-ը: Առանձին վերցրած՝ որևէ քանակ չի արտահայտում (լատ.՝ **nullus**՝ «ոչինչ»)։ մեծացում կամ փոքրացում է տվյալ թիվը՝ դրվելով որևէ թվանշանից աջ կամ ձախ: Հավանաբար, սա է պատճառը, որ **գրո**-ն առանձին, որպես կանոն, քերականություններում թվական չի համարվել: Պատճառները մեկն էլ հավանաբար այն է, որ մաթեմատիկայում այն համեմատաբար նոր ժամանակներում է գործադրվել՝ 18-րդ դարի գերմանացի մաթեմատիկոս Լեոնարդ Էյլերի աշխատասիրությամբ: Կարծում ենք նաև, որ և՛ մաթեմատիկայում, և՛ քերականության մեջ այս երևույթի չարձանագրումը նախասկզբնական մտածողության ու երևույթների յուրահատուկ ընկալման

* Հոդվածն ընդունվել է տպագրության 20.03.2024:

արգասիք է. թվականը առարկայի քանակ կամ քանակային հատկանիշ նշանակող բառ է (սովորաբար «իրացվում է») այլ թվանշանների գուգորդությամբ), մինչդեռ մարդկային սովորական ընկալման մեջ առարկայի քանակը կամ քանակությունը սկսվում կամ հաշվվում է մեկից. մեզնից յուրաքանչյուրի առջև եթե տասնյակ առարկաներ լինեն շարված, մենք դրանց քանակը կրկալենք կամ կհաշվենք մեկից սկսած: Առհասարակ թվերի ծագումը ունի նշանային բովանդակություն. կապվում է մարդու մարմնի անդամների անունների հետ: Հաշվել սկսել են մատների քանակով, և շատ լեզուներում դրանք սերտ կապ են ունեցել իրար հետ: Էսկիմոսների լեզվում, օրինակ, **20** նշանակում է **մարդ** (որով անվանվում է մարդու ձեռքի և ոտքի մատների գումարը), **100**-ը՝ **հինգ մարդ**՝ $100 : 20 = 5^1$:

Այսպիսով՝ զրոն անվանում է առարկայի քանակ (դրա բացակայությունը) այնպես, ինչպես հինգը, քսանը, հարյուրը: Առարկայի քանակ չանվանելը կամ ցույց չտալը նույնպես նշանակում է առարկայի որոշակի քանակային հատկանիշ, ինչպես՝ «Նա ընտրություններին հավաքել է **զրո** ձայն», «Իրսում ջերմությունը **զրո** աստիճան է»:

Թվական խոսքի մասի իմաստային յուրահատկություններից է նաև այն, որ թվական համարվող բառերը իրենց բառային նշանակությամբ գերազանցապես մենիմաստ են: Բազմիմաստությունը և փոխաբերորեն գործածությունը բնորոշ չեն թվականներին: Քիչ թվականներ են օժտված այդպիսի հատկանիշներով: **Հինգ** թվականը, օրինակ, բառարանային տվյալներով իր հիմնական իմաստից բացի (1. *Չորսին ավելացրած մեկ, փասի կեսը*), ունի ևս չորս իմաստ՝ 2. *գ. Հինգ միավորից բաղկացած քանակություն, հնգյակ*: 3. *Հինգ թվանշանը*: 4. *Սովորողի առաջադիմության բարձր գնահատական*: 5. *(խսկց.) Առհասարակ՝ որևէ բանի բարձր գնահատական*:

Ջրո-ն բազմիմաստ թվականներից է և ունի նաև փոխաբերական իմաստ. բառի չորս իմաստներից մեկը փոխաբերական է. նշանակում է *ոչնչություն, չնչիություն, աննշանություն*², ինչպես, օրինակ, այս նախադասության մեջ՝ «Այդ ամենը երկրի բարօրության համար ունեցավ **զրո** նշանակություն»:

Այսպիսով. զրոն՝ որպես առարկայի քանակային հատկանիշ նշանակող բառ, պետք է գետեղվի քանակական թվականների շարքում:

Մերոնք և ձերոնք բառերը որպես դերանուն: Այս հարցի մասին շատ է խոսվել: Գրվել են նույնիսկ առանձին հոդվածներ³: Բայց տարակարծու-

1 Տե՛ս Աճառյան Հ., Լիակատար քերականություն, հատ. 1, Եր., 1952, էջ 232:

2 Տե՛ս Աղայան Է., Արդի հայերենի բացատրական բառարան, Եր., 1976:

3 Տե՛ս Խլղաթյան Ֆ., **Մերոնք և ձերոնք** բառերի մասին, «Հայոց լեզուն և գրականությունը դպրոցում», Եր., 1968, N 1-2, էջ 99-102, **Ներսիսյան Վ.**, Գրական արևե-

յունները շարունակվում են: Բացատրական բառարանները **մերոնք** և **ձերոնք** բառերը կա՛մ համարում են գոյական (**Մերոնք, թոնց, յոզն. գ. 1. Մեր ունեցածները....** (ՀԲԲ); **Մերոնք, թոնց, գ. հվք. 1. Մեր մուրիկները՝ հարազարները....** (ԱՀԲԲ); **Ձերոնք, թոնց, հոզն. գ. (բրբ.), 1. Ձեզ պարկանածները....** ԺՀԼԲԲ-ն), կա՛մ չեն նշում խոսքի մասը (**Մերոնք, թոնց (հոզն.)՝ 1. Մեր մերձավորները....** ԺՀԼԲԲ): Է. Աղայանը հարցին անդրադառնում է նաև իր աշխատություններից մեկում. **ք/ց** հերթագայությամբ հոլովվող գոյականների շարքում (Վարդանանք, Վանդունք, Չալոյենք)՝ որպես **-ոնք** մասնիկով կազմություն, ներկայացնում է նաև **մերոնք** բառի հարացույցը⁴:

Ժամանակակից քերականությունների մեծ մասում դրանք համարվել են ոչ թե գոյականներ, այլ՝ դերանուններ:

Ս. Աբրահամյանը **մերոնք**-ը և **ձերոնք**-ը համարում է «մի շարք դերանունների հոգնակիներ», ինչպես, ասենք՝ **իմոնք, քոնոնք, իրենք, որոնք** և նման ձևերը⁵: Հ. Հարությունյանը այդ բառերը համարում է դերանուն և դրանց անդրադառնում է դերանուն խոսքի մասին նվիրված իր ուսումնասիրության մեջ: «**Մերոնք** և **ձերոնք** դերանունները հոգնակի են,– գրում է նա,– որոնք կազմված են անվանական **-ոնք** հոգնակերտով, որը դրվել է սեռականի ձևի վրա, և նշանակում են առաջին կամ երկրորդ դեմքերին վերաբերող, մոտ անձ, առարկա»⁶: Նա դերանունները դասակարգում է ըստ դրանց արտահայտած ընդհանուր իմաստի (ի՞նչ են ցույց տալիս) և հարաբերակից խոսքի մասերի հետ ունեցած հարաբերության և ուստի այս դերանունները համարում է գոյական դերանուններ՝ իրենց հատուկ՝ գոյականական հատկանիշներով:

Հարցին անդրադարձել է նաև Ա. Մարգարյանը: «...Այդ ձևերը,– գրում է նա,– տակավին հիմնավոր ու ձիշտ պատասխան չեն ստացել և պահանջ են դնում պարզելու, թե իրապես լեզվական ինչ կամ ինչպիսի իրողություններ են դրանք»⁷: Նա զարգացնում է Գ. Սևակի տեսակետը, ով նշված ձևերը համարում էր «անձնական դերանուններից կազմված փոխանուն սեռականների հոգնակի»⁸: «Անձնական դերանուններից սերող այս ձևերը,– գրում է Ա. Մարգարյանը, – բոլոր դեպքերում դերանուններ են, և, իբրև այդպիսիք, հատկանշվում են դրանց իսկ հատուկ խոսքիմասային իմաստով. **իմը**-իմոնք, **քոնը**-քոնոնք, **մերը**-մերոնք, **ձերը**-ձերոնք զուգադիր ձևերը ընդհա-

լահայերենի **մերոնք** // **ձերոնք** բառերի խոսքիմասային արժեքի հարցը, «Լեզու և լեզվաբանություն», Եր., 2018, N I (18):

4 Աղայան Է., Ժամանակակից հայերենի հոլովումը և խոնարհումը, Եր., 1967, էջ 253:

5 Տե՛ս Աբրահամյան Ս., Պառնասյան Ն., Օհանյան Հ., Ժամանակակից հայոց լեզու, հատ. 2, Եր., 1974, էջ 101:

6 Հարությունյան Հ., Ածական անուն, դերանուն, Եր., 1976, էջ 76:

7 Մարգարյան Ա., Հայոց լեզվի քերականություն. ձևաբանություն, Եր., 2004, էջ 309:

8 Սևակ Գ., Ժամանակակից հայոց լեզվի դասընթաց, Եր., 2009, էջ 260:

նուր, չտարբերակված առարկայական և ներունապես էլ պատկանելության, ստացականության իմաստ են արտահայտում, ուստի և դերանվան մի առանձին տեսակ են հանդիսանում և իրավամբ էլ կարող են կոչվել **փոխանուն ստացական դերանուններ**⁹:

Ֆ. Խլղաթյանը դրանք համարում է անձնական դերանունների տարատեսակ՝ **հատկացական դերանուններ**¹⁰ ի տարբերություն անձնական **դիմային** դերանունների (*ես, դու, ինքը, մենք, դուք, իրենք*)¹⁰: Մ. Ասատրյանը դրանց մասին մի երկու խոսք է ասում «Գերդաստան, տոհմ, խմբակցություն ցույց տվող գոյականներ» ենթավերնագրի տակ. «Կան նաև,– գրում է նա,– **ՈՆՔ** ձևով կազմված բառեր դերանունների սեռական հոլովածներից, օրինակ՝ **մերոնք, ձերոնք**: Ժողովրդական–բարբառային են **խոնք, քոնք** և այլ ձևերը»¹¹: Եվ, ինչպես նկատեցիք, չի նշում դրանց խոսքիմասային պատկանելությունը՝ դրանք անվանելով սոսկ **-ոնք** մասնիկով կազմված **բառեր**: Հ. Հարությունյանը համարում է պարզապես առարկայանիշ կամ գոյական դերանուններ, «որոնք կազմված են անվանական **-ոնք** հոգնակերտով, որը դրվել է սեռականի ձևի վրա, և նշանակում է առաջին կամ երկրորդ դեմքին վերաբերող, մոտ անձ, առարկա»¹²: Եվ վերջապես, ուսումնասիրողներից Վ. Ներսիսյանը առաջարկում է արևելահայերենում ընդունել **ստացական դերանունների**¹³՝ որպես դերանուն խոսքի մասի առանձին տեսակի գոյությունը և քննարկվող դերանունները (*մերոնք, ձերոնք, խոնք, քոնք* ևն) զետեղել դերանվան այդ տեսակի մեջ¹³:

Առհասարակ այս կամ այն բառի կամ բառախմբի խոսքիմասային պատկանելության հարցը քննարկելիս բնականաբար պետք է առաջնորդվել խոսքի մասերին հատուկ քերականական տարբերակիչ հատկանիշներով:

Բայց ահա, որքան էլ տարօրինակ է, քննարկողները հարցը այս տեսանկյունից չեն դիտարկում՝ բացառությամբ առանձին դեպքերի, երբ մատնանշվում է **մերոնք** և **ձերոնք** բառերի՝ դերանուններին բնորոշ ընդհանրական իմաստ արտահայտելը: Մինչդեռ այդ բառերի՝ խոսքիմասային հատկանիշների հիմունքով բնութագրումը հստակ կարող է ցույց տալ դրանց խոսքիմասային պատկանելությունը: Հարցը այս տրամաբանությամբ քննարկելիս ակնհայտ է դառնում, որ **մերոնք, ձերոնք** բառերն ունեն դերանուններին հատուկ խոսքիմասային բոլոր հատկանիշները: Այսպես: **Առաջին**. հայտնի է, որ դերանուն համարվող բառերի ամենաբնորոշ գիծը, ի տարբերություն անուն խոսքի մասերի, ընդհանուր, չտարբերակ-

9 Մարգարյան Ա., նշվ. աշխ., էջ 309:

10 Տե՛ս Խլղաթյան Ֆ., Ժամանակակից հայոց լեզու, հատ. Գ, Եր., 2007, էջ 114-115:

11 Ասատրյան Մ., Ժամանակակից հայոց լեզու. ձևաբանություն, Եր., 2004, էջ 53:

12 Հարությունյան Հ., նշվ. աշխ., էջ 76:

13 Տե՛ս Ներսիսյան Վ., նշվ. հոդվ., էջ 63-66:

ված իմաստ արտահայտելն է: **Մերոնք/ձերոնքի** իմաստը խոսքից դուրս խիստ ընդհանրական է և կարող է վերաբերել ցանկացած խոսողի կամ խոսակցի՝ առանց տարբերակման, այնպես, ինչպես **ես, դու, նա** դերանուններինը կամ **իմոնք, քոնոնք, նրանցոնք** ստացական խոսակցական ձևերինը: **Երկրորդ**. դերանուն համարվող բառերը ոչ թե անվանում են առարկան (առարկայի հատկանիշը կամ հատկանիշի հատկանիշը), այլ ցույց են տալիս, մատնանշում են այն: **Մերոնք**-ը և **ձերոնք**-ը, ինչպես բոլոր գոյական դերանունները, ցույց են տալիս, մատնացույց են անում առարկա: **Երրորդ**. դերանունների մի զգալի մասը ցույց է տալիս առարկա, առարկայի հատկանիշ և հատկանիշի հատկանիշ որոշակի տարածական կամ դիմային հարաբերությամբ. դրանք եռաշարք կազմություններն են՝ *ես, դու, նա; այս, այդ, այն* և դրանցով կազմվածները՝ *այսպետեղ, այդպետեղ, այնպետեղ; այսքան, այդքան, այնքան; այսպես* ևն: **Մերոնք**-ը և **ձերոնք**-ը նույնպես առարկան ցույց են տալիս որոշակի դիմային հարաբերությամբ (**մերոնք** = իմ յուրայինները, **ձերոնք** = քո յուրայինները, **նրանցոնք** = նրա յուրայինները): Եվ վերջապես **չորրորդ**. քննարկվող դերանունները, ինչպես բոլոր մյուս դերանունները, կատարում են փոխարինող դեր. փոխարինում են գերազանցապես անուն խոսքի մասերին: Այսպես՝ «Եկվորների աշխատավարձը *հայաստանյան մասնագետների* աշխատավարձից մի քանի անգամ ավելի է, մինչդեռ **մերոնք** (= հայաստանյան մասնագետներն) են կրում ընկերության աշխատանքի ամբողջ ծանրությունը»:

Այսպիսով՝ **մերոնք** և **ձերոնք** (ինչպես նաև **իմոնք, քոնոնք**) բառերը, քանի որ ունեն դերանուններին բնորոշ հատկանիշներ, հետևաբար կարող են իրենց տեղը ունենալ դերանուն խոսքի մասի մեջ: Ո՞րն է այդ տեղը, դերանունների ո՞ր տեսակի մեջ: Իրենց հատկանիշներով (հարաբերակից են գոյականներին. ունեն գոյականին բնորոշ հատկանիշներ)՝ դրանք գոյական դերանուններ են: Քերականություններում առավել ընդունված է դրանց եզակիի ձևերը կոչել **փոխանունսեռականներ**¹⁴ (ինչպես՝ *իմը-իմինը, իմինները, իմիններից, իմիններով, իմիններում; քոնք-քոնինները, մերը-մերինները; ձերը-ձերինները, ձերինների* ևն): Հոգնակի 3-րդ դեմքի այս ձևերը, սակայն, ի տարբերություն եզակի ձևերի, արտահայտում են հիմնականում անձերի **հավաքական նշանակություն**. հարաբերակցվում են 1-ին և 2-րդ դեմքերին և մատնացույց են անում խոսողի կամ խոսակցի անունից հանդես եկող խումբ՝ բացառյալ խոսողը կամ խոսակիցը (Սիրելի՛ս, **ձերոնք** արդեն գնացել են; **Մերոնք** իմ մասին մոռացել են): Հետևաբար ավելի ձիշտ

14 **Սեռական**-ը այստեղ գործածված է (և ընդհանրապես՝ ժամանակակից հայերենում ձիշտ կլինի գործածել) «տրական հոլովի սեռական տարբերակը» նշանակությամբ:

կլիհի դրանք կոչել **հավաքական նշանակությամբ փոխանունգոյական դերանուններ**, ինչպես որ ունենք **-անք, -ենք, -ունք, -ոնք** վերջավորություններով հավաքական հոգնակիներ՝ *պապոնք, Գրիգորենք, Վեդունք, Վարդասանք* են: Այդ դերանունները, ինչպես նշված համարժեք գոյականները, ենթարկվում են **g** հոլովման (*մերոնք-մերոնց, մերոնցից, մերոնցով, մերոնցում* են): Ի դեպ, դրանք առավելապես *անձնանիշ* դերանուններ են (Շատ մարդ էր մասնակցում փառատոնին, թեև **ձերոնցից** շատերը չկային), սակայն կարող են հանդես գալ նաև որպես *իրանիշ* (Արևիկերը մի՛ խառնեք իրար. **ձերոնք** առանձնացրե՛ք. **մերոնցում** այլ միրգ է լցված): Հազվադեպ գործածվում են նաև հոգնակի թվով (Օգտագործե՛ք ձեր ճամպուկները. դրանք դատարկ են. **մերոնցներում** իրեր կան): Քննարկվող բոլոր այս ձևերը առավել բնորոշ են խոսակցական լեզվին:

Այսպիսով, արդի արևելահայերենի ձևաբանության տեսությունը, թեև բազմաթիվ վիճելի հարցերի վերաբերյալ ունի մշակված տեսակետներ, սակայն, այնուամենայնիվ, ժամանակի ընթացքում ծագում են տեսական կամ գործնական լուծում պահանջող նորանոր խնդիրներ, որոնք ենթադրում են նոր քննարկումներ և հնարավոր նոր լուծումներ: Այս հոդվածում փորձ է արվել ձգբրտելու երկու կարևոր հարցադրում և առաջարկելու լուծում, ըստ որի՝ **առաջին՝ գրոն** ունի թվական խոսքի մասին հատուկ քերականական հատկանիշներ և պետք է զետեղվի այդ խոսքի մասի համակարգում՝ որպես քանակական թվական, և **երկրորդ՝ մերոնք և ձերոնք** բառերը (ինչպես նաև՝ **իմոնք, քոնոնք, նրանցոնք**)՝ որպես դերանուններ, համապատասխան իմաստային-քերականական հատկանիշներով (որոնք վերը քննարկվեցին) հարաբերակից են գոյականին և իրապես կարող են համարվել փոխանուն գոյական դերանուններ՝ հավաքական նշանակությամբ:

Յուրի Ս. Ավետիսյան - հեղինակ է մեկ տասնյակից ավելի մենագրական աշխատանքների, ձեռնարկների ու դասագրքերի, մոտ յոթ տասնյակ գիտական հոդվածների: Համահեղինակ է երկու տասնյակից ավելի գրքերի: Գիտական նախասիրություններն են՝ արևմտահայերեն, խոսքի մշակույթ և ոճագիտություն, ժամանակակից հայոց լեզվի քերականություն և այլն:

Էլ. հասցե՝ yuriavetisyan@ysu.am

QUESTIONS OF MORPHOLOGY

(zero as a numeral, the words "մերոնք" and "ձերոնք" as pronouns)

Yuri S. Avetisyan

Doctor of Sciences in Philology

Key words: zero, numeral, quantity, speech-parts features, polysemy, "մերոնք", "սերոնք", noun, pronoun, singular, collective meaning, metonymy, possessive, conjugation "ց".

The theory of the Armenian language has provided answers to many controversial questions of modern Armenian grammar. Of course, there are still disagreements on many issues, which will eventually be discussed, answers will be given, new disagreements will arise, and so on. This is a normal development of a language theory. And at all levels of the language, there are issues that have not received much attention or have not been discussed enough. This may also be because they had no systemic significance or there was simply no reason to make them the subject of special discussion. At the morphological level, we have identified two of them: firstly, zero as a number, and secondly, the verbal-partial affiliation of the words "մերոնք" and "ձերոնք". 1. Zero is an integer and a digit in mathematics, as well as 1, 10, 12, 100. Taken separately, it does not express any quantities (Latin: nullus "nothing"). Increases or decreases a given number by placing it to the right or left of any digit. This is probably why the zero alone, as a rule, was not considered a number in grammar. Another reason is probably that it was applied in mathematics relatively recently, thanks to the efforts of Leonard Euler, a German mathematician of the 18th century. Zero names the number of the object (its absence) just like five, twenty, one hundred. Not naming or showing the number also means a certain quantitative characteristic of the subject, for example, "He scored zero votes in the election.", "It's zero degrees outside." One of the semantic features of the numerical part of speech is also that the words considered numerals are mostly unambiguous in their lexical meaning. Ambiguity and metaphorical use are not inherent in numerals. Few numerals are endowed with such characteristics. Zero is one of the multi-valued numbers, and also has a figurative meaning: one of the four meanings of this word is figurative, it means nothing, triviality, insignificance, as, for example, in this sentence: "All this did not matter at all for the good of the country." 2. The words "մերոնք" and "ձերոնք" (as well as ինոնք, քնոնք, նրանցոնք) how pronouns with the corresponding semantic and grammatical characteristics (act as a substitute for a name in speech, have a common, undifferentiated meaning, indicate an object in a

temporal-spatial-facial relation, etc.) relate to a noun and can indeed be considered as pronouns of a noun with a collective meaning.

Резюме

ВОПРОСЫ МОРФОЛОГИИ

(ноль как числительное, слова «սերնւր» («наши») и «ծերնւր» («ваши») как местоимения)

Юрий С. Аветисян
Доктор филол. наук

Ключевые слова – ноль, числительное, количество, частеречные признаки, многозначность, «սերնւր» («наши»), «ծերնւր» («ваши»), существительное, местоимение, единственное число, собирательное значение, метонимия, притяжательное, спряжение «ց».

Теоретические исследования армянского языка дали ответы на многие спорные вопросы современной армянской грамматики. Конечно, по многим вопросам все еще существуют разногласия, но они будут обсуждаться, на них будут найдены ответы, возникнут новые разногласия и т.д. Это нормальное развитие теории языка. И на всех уровнях изучения языка есть вопросы, которым не уделялось должного внимания или которые обсуждались недостаточно детально. Это может быть, еще и потому, что они не имели системного значения или просто не было поводов сделать их предметом особого обсуждения. На морфологическом уровне мы выделили два таких вопроса: во-первых, ноль как число, во-вторых, словесно-частеречная принадлежность слов «սերնւր» и «ծերնւր».

1. Ноль – это целое число и цифра в математике, как и 1, 10, 12, 100. Взятый отдельно, он не выражает количество (лат.: nullus` «նշին»), увеличивает или уменьшает число, помещается справа или слева от любой цифры. Именно поэтому ноль отдельно, как правило, не считался числом в грамматике. Еще одна причина, вероятно, заключается в том, что в математике ноль как число, было принято относительно недавно, благодаря стараниям Леонарда Эйлера, немецкого математика XVIII в. Ноль называет количество объекта (его отсутствие) так же, как пять, двадцать, сто. Не называть или показывать количество также означает определенную количественную характеристику предмета, например: «Он набрал ноль голосов на выборах», «На улице жара ноль градусов». Одной из семантических особенностей числовой части речи является также то, что слова,

считающиеся числительными, преимущественно однозначны по своему лексическому значению. Многозначность и метафорическое использование не присущи числительным. Немногие числительные наделены такими характеристиками. Ноль является одним из многозначных чисел, а также имеет переносное значение. Одно из четырех значений этого слова – переносное, означает «ничто, тривиальность, незначительность», как, например, в этом предложении: «Все это не имело никакого значения для блага страны». 2. Слова «մերոնք» [meronq] («наши») и «ձերոնք» [dzeronq] («ваши»), а также իմոնք [imonq] («мои»), քոնք [qononq] («твой»), նրանցոնք [nranconq] («их»), как местоимения с соответствующими семантико-грамматическими характеристиками (выполняют роль замены имени в речи, имеют общее, недифференцированное значение, указывают на объект во временно-пространственно-лицевом отношении и т.д.) соотносятся с существительным и действительно могут рассматриваться как местоимения с собирательным значением.

Օգտագործված գրականություն

1. **Աբրահամյան Ս., Պառնասյան Ն., Օհանյան Հ.**, Ժամանակակից հայոց լեզու, հատ. 2, Եր., 1974:
2. **Աղայան Է.**, Արդի հայերենի բացատրական բառարան, Եր., 1976:
3. **Աղայան Է.**, Ժամանակակից հայերենի հոլովումը և խոնարհումը, Եր., 1967:
4. **Աճառյան Հ.**, Լիակատար քերականություն, հատ. 1, Եր., 1952:
5. **Ասատրյան Մ.**, Ժամանակակից հայոց լեզու. ձևաբանություն, Եր., 2004:
6. **Խլղաթյան Ֆ.**, Ժամանակակից հայոց լեզու, հատ. Գ, Եր., 2007:
7. **Խլղաթյան Ֆ., Մերոնք և ձերոնք** բառերի մասին, «Հայոց լեզուն և գրականությունը դպրոցում», Եր., 1968, N 1-2:
8. **Հարությունյան Հ.**, Ածական անուն, դերանուն, Եր., 1976:
9. **Մարգարյան Ա.**, Հայոց լեզվի քերականություն. ձևաբանություն, Եր., 2004:
10. **Ներսիսյան Վ.**, Գրական արևելահայերենի **մերոնք // ձերոնք** բառերի խոսքինասային արժեքի հարցը, «Լեզու և լեզվաբանություն», Եր., 2018, N 1 (18):
11. **Սևակ Գ.**, Ժամանակակից հայոց լեզվի դասընթաց, Եր., 2009:

REFERENCES

1. **Abrahamyan S., Paṙnasyan N., Ōhanyan H.**, Zhamanakakits' hayots' lezu, hat. 2, Yer., 1974 (**In Armenian**).
2. **Acharyan H.**, Liakatar k'erakanut'yun, hat. 1, Yer., 1952 (**In Armenian**).
3. **Aghayan Ē.**, Ardi hayereni bats'atrakan baṙaran, Yer., 1976 (**In Armenian**).

4. **Aghayan Ē.**, Zhamanakakits' hayereni holovumě yev khonarhumě, Yer., 1967 (**In Armenian**).
5. **Asatryan M.**, Zhamanakakits' hayots' lezu. dzevabanut'yun, Yer., 2004 (**In Armenian**).
6. **Harut'yunyan H.**, Atsakan anun, daranun, Yer., 1976 (**In Armenian**).
7. **Khlghat'yan F.**, **Meronk'** yev **dzeronk'** bařeri masin, "Hayots' lezun yev grakanut'yuně dprots'um", Yer., 1968, N 1-2 (**In Armenian**).
8. **Khlghat'yan F.**, Zhamanakakits' hayots' lezu, hat. G, Yer., 2007 (**In Armenian**).
9. **Margaryan A.**, Hayots' lezvi k'erakanut'yun. dzevabanut'yun, Yer., 2004 (**In Armenian**).
10. **Nersisyan V.**, Grakan arevelahayereni **meronk'** // **dzeronk'** bařeri khosk'imasayin arzhek'i harts'ě, "Lezu yev lezvabanut'yun", Yer., 2018, N 1 (18) (**In Armenian**).
11. **Sevak G.**, Zhamanakakits' hayots' lezvi dasěnt'ats', Yer., 2009 (**In Armenian**).